ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԴԱՒԻԹ ԴԱՒԻԴԵԱՆՑ
ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սէրը եւ օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ մեր Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Մեծարգոյ պրն. Դաւիդեանց,

Գոհունակութիւն է Հայրապետիս համար Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանից տեղեկանալ Ձեր բարեպաշտ ու արժանաւոր ընթացքի մասին, որը զարդարուած է ազգային եւ եկեղեցական մեր կեանքում գովարժան իրագործումների բարի արգասիքներով:

Մեծապէս գնահատելի է Ձեր աւանդը Ռուսաստանի Դաշնութիւնում բնակեալ հայորդեաց ազգային եւ հոգեւոր կեանքում: Տասնամեակներ շարունակ Ձեր ազնիւ ընծայաբերումները Տիրոջ օրհնութեամբ արդիւնաւորուել են ի նպաստ ռուսահայոց թեմի պայծառութեան: Հայրապետիս համար առանձնակի գոհունակութիւն է, որ Դուք սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակցութիւն բերեցիք նաեւ թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցման մեծ եւ նուիրական գործին: Եկեղեցասէր հայորդիներիդ ազնիւ հոգածութեամբ դէպի երկինք խոյացած փառաշուք Եկեղեցին սերնդէ սերունդ պիտի ծառայի ռուսաստանաբնակ Մեր զաւակներին եւ երկնային օրհնութեամբ ու առատ շնորհներով լցնի նրանց հոգեւոր ու ազգային կեանքի անդաստանը:

Ի գնահատութիւն մեր ժողովրդի եւ Եկեղեցու կեանքում Ձեր բազմարդիւն վաստակի եւ սիրով ընդառաջ թեմական Առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աջի հովանու ներքոյ պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին եւ օրհնի Ձեր կեանքը քաջառողջութեամբ եւ երկնատուր բիւր բարիքներով:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 774